Արձանագրություն 17

«ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-24/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հայտերի բացման և գնահատման նիստի

«ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի երկրորդ փուլի հայտերի բացման և գնահատման նիստը սկսվեց 18.07.2025թ. ժամը 12:00-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, որին չէին մասնակցում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գ. Մանթաշյանը և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ք. Ղալեչյանը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա. Աղաբաբյանը տեղեկացրեց, որ՝

- հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից իրեն հիմնավորումներ չեն ներկայացվել.

- երկրորդ փուլին մասնակցելու հայտեր են ներկայացրել նախաորակավորված ներքոհիշյալ մասնակիցները.

	Մասնակցի անվանումը
1.	EUROPEAN DYNAMICS SA
2.	Amazon Web Services
3.	Oracle

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- EUROPEAN DYNAMICS SA և Oracle ընկերությունների ներկայացրած հայտերը պարունակող ծրարները բավարարում են հրավերով սահմանված պայմաններին.

- «Amazon Web Services» (AWS) ընկերության կողմից ստացվել է հաղորդագրություն, որ հայտը ներկայացվելու է երկու փաթեթով, որը պետք է ներկայացներ «Հայփոստ» ՓԲԸ-ն: Սակայն, հանձնաժողովի նիստում ներկայացված է եղել միայն մեկ փաթեթ: AWS ներկայացուցիչները նիստի ընթացքում կապ են հաստատել հանձնաժողովի հետ, որոնք խնդրել են փաթեթը չբացել, կասկած հայտնելով, որ «Հայփոստ» ՓԲԸ-ն չի կատարել AWS հրահանգը: Արդյունքում, առկա է ողջամիտ կասկած, որ չնայած այն հանգամանքի, որ AWS փոստային ծառայությանը տրամադրել էր փաթեթի կազմման հրահանգներ՝ ըստ հրավերի պահանջների, հնարավոր շեղումն առաջացել էր փոստային ծառայության սխալի

արդյունքում: AWS-ի ներկայացուցչի կողմից շտկվել և նիստի ընթացքում ներկայացվել է հրավերի պահանջներին բավարարող հայտը պարունակող փաթեթները: Արդյունքում՝ AWS-ի հայտը պարունակող ծրարը կազմվել և ներկայացել է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Հանձնաժողովը բացեց ծրարները և որոշեց.

- նիստը կասեցնել՝ ծրարներում ներառված փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին բավարարելու հանգամանքը ուսումնասիրելու և անհամապատասանություններ հայտնաբերելու դեպքում դրանց շտկման գործընթաց նախաձեռնելու համար,

- նիստը վերսկսել 23/07/2025թ. ժամը 14:30-ին՝ հեռավար եղանակով՝ Zoom համակարգի միջոցով /այսուհետ՝ հեռավար եղանակով/:

23/07/2025թ. ժամը 14:30-ին գնահատող հանձնաժողովը, որի աշխատանքներին չէին մասնակցում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Դ. Գրիգորյանը, «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն Ն. Երիցյանը և ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության պետ Վ.Մահտեսյանը, հեռավար եղանակով շարունակեց կասեցված նիստի աշխատանքները: Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էին նաև քարտուղար Ա. Աղաբաբյանը և «Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչներ Մ. Մուրադյանը, Վ. Մարտինյանը (ՀՀ ՖՆ և «Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի միջև 20"04"2021թ. կնքված N ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-20/1 պայմանագրի համաձայն վերջինս գնման հայտերի գնահատման գործընթացում խորհրդատվական ձայնի իրավունքով ընդգրկվում է հանձնաժողովի կազմում և ստորագրում շահերի բախման բացակայության մասին հայտարարություն՝ հանձնաժողովին տրամադրելով նաև գնման փաստաթղթերով սահմանված պահանջներին հայտերի համապատասխանության վերաբերյալ եզրակացություն):

Հանձնաժողովը արձանագրեց, որ՝

- EUROPEAN DYNAMICS SA and VXSOFT LLC համատեղ գործունեությամբ հանդես եկող մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել.

- Amazon Web Services ընկերության հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- նշված է, որ Leverx ընկերությունը հանդիսանում է Amazon Web Services ընկերության գործընկերը, սակայն հայտում բացակայում է կոնսորցիումի պայմանագիրը,
- առկա չէ հրավերով պահանջված դիմում-հայտարարությունը,
- Amazon-ի տեխնիկական առաջարկները ստորագրված/հաստատված չեն:

- Oracle ըներության հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- նշված է, որ Dota IT ընկերության հանդիսանում է Oracle ընկերության գործընկերը, սակայն հայտում բացակայում է կոնսորցիումի պայմանագիրը,
- մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում բացակայում է մասնակցի իրական շահառուներ պարունակող կայքէջի հղումը, դրա փոխարեն ներկայացված է պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած ընկերության (ոչ թե իրական շահառուներ պարունակող էջի) կայքէջի հղումը,
- առկա չեն ծրագրային ապահովման պահպանման պայմանագիրը /Software Maintenance Agreement (SMA)/, վերջնական օգտագործողի լիցենզիայի համաձայնագրերը /End User License Agreement (EULA)/, Ֆունկցիոնալ պահանջների լուծման մեթոդների միավորի հաշվարկը /Methods For Solving Functional Requirements (FR)/,
- Oracle-ի տեխնիկական առաջարկները ստորագրված/հաստատված չեն,
- նշված չէ տեղեկատվություն System Ownership (OW)-ի վերաբերյալ: Տեղեկատվությունը կարևոր է, քանի որ հրավերի համաձայն՝ OW պատվիրատուին փոխանցվելու դեպքում մասնակիցը կստանա 100 միավոր, չփոխանցվելու դեպքում՝ 0 միավոր:

Քննարկումների արդյունքում՝ հանձնաժողովը որոշեց.

- կասեցնել նիստը և «Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչներին առաջարկեց իրենց կողմից ևս իրականացնել մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն և հանձնաժողովին ներկայացնել առաջարկություն դրանց վերաբերյալ,
- նիստը վերսկսել 29/07/2025թ ժամը 10:00-ին՝ հեռավար եղանակով:

29/07/2025թ. ժամը 10:00-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին չէին մասնակցում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

Ա.Քոչարյանը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Դ.Գրիգորյանը և «Էլեկտրոնային կառավարման, ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի տնօրենի տեղեկատվական տոխնոլոգիաների գծով տեղակալ Տ. Առուշանյանը՝ հեռավար եղանակով շարունակեց կասեցված նիստի աշխատանքները: Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էին նաև քարտուղար Ա. Աղաբաբյանը և «Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչներ Մ. Մուրադյանը, Վ. Մարտինյանը:

«Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչները հայտնեցին, որ արձանագրել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Oracl ընտրության հայտում առկա չեն նաև փորձարկման մեթոդաբանությունը /testing methodology/, ծրագրի ներդրման մեթոդաբանությունը /Project rollout methodology (Training and Pilot methodology)/:

Հանձնաժողովը որոշեց գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել և արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար Leverx և Dota IT ընկերություններին ծանուցելու վերաբերյալ տեքստերը հաստատելու /այդ թվում՝ անգլերեն լեզվով/ համար նիստը վերսկսել 05/08/2025թ ժամը 10:00-ին՝ հեռավար եղանակով:

05/08/2025թ. ժամը 10:00-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին չէին մասնակցում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Քոչարյանը, «Էլեկտրոնային կառավարման, ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի տնօրենի տեղեկատվական տոխնոլոգիաների գծով տեղակալ Տ. Առուշանյանը և ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության պետ Վ.Մահտեսյանը, հեռավար եղանակով շարունակեց կասեցված նիստի աշխատանքները: Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էին նաև քարտուղար Լ. Սահակյանը և «Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչ Մ. Մուրադյանը:

Հանձնաժողովը որոշեց,

- հաստատել Leverx և Dota IT ընկերությունների ծանուցման տեքստերը, որը գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Սահակյանը նույն օրը պետք է ուղարկի նշված մասկանիցներին,
- Leverx և Dota IT ընկերություններին շտկման համար տրամադրել 1 օր ժամանակ՝ մինչև 06.08.2025թ. Երևանի ժամանակով ժամը՝ 24:00,
- նիստը վերսկսել 07/08/2025թ ժամը 12:30-ին՝ հեռավար եղանակով:

07/08/2025թ. ժամը 12:30-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին չէին մասնակցում «Էլեկտրոնային կառավարման, ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի տնօրենի տեղեկատվական տոխնոլոգիաների գծով տեղակալ Տ. Առուշանյանը և ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության պետ Վ.Մահտեսյանը, հեռավար եղանակով շարունակեց կասեցված նիստի աշխատանքները: Հանձնաժողովի աշխատանքներին չէին մասնակցում նաև «Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչները: Հանձնաժողովի աշխատանքներին մասնակում էր քարտուղար Լ. Սահակյանը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

-Leverx և Dota IT ընկերությունների կողմից շտկման ենթակա փաստաթղթերը վերջիններս ներկայացրել են սահմանված ժամկետներում՝ մինչև 06.08.2025թ. Երևանի ժամանակով ժամը՝ 24:00,

- Leverx ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում շտկված են արձանագրված անհամապատասխանությունները,

- Dota IT ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում շտկված են արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ իրական շահառուներ պարունակող կայքէջի հղման: Մասնավորապես դիմում-հայտարարությունում ներառվել է հղում, որով հասանելի չէ պահանջվող տեղեկատվությունը:

Միաժամանակ Dota IT ընկերության կողմից ներկայացված հաղորդագրության համաձայն, խնդիրը պետական ռեգիստրի գործակալության համապատասխան համակարգինն է, որը շտկելու համար կպահանջվի 2-3 օր:

Քննարկումների արդյունքում հանձնաժողովը որոշց.

-Dota IT ընկերության իրական շահառուներ պարունակող կայքէջի հղման հետ կապված խնդիրը շտկվելու դեպքում վերջինիս հայտում այդ մասով արձանագրված անհամապատասխանությունը համարել շտկված,

-գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել մասնակիցների կողմից առաջարկվող համակարգերի դեմո տարբերակների ցուցադրությունից հետո, իսկ ցուցադրության ձևաչափի և ժամկետների վերաբերյալ վերջիններիս առաջարկները լսելու և որոշում կայացնելու համար հրավիրել հեռավար հանդիպում 12.08.2025թ. Երևանի ժամանակով ժամը՝ 18:00-ին:

21/10/2025թ. ժամը 10:00-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին չէր մասնակցում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Դ. Գրիգորյանը, հեռավար եղանակով շարունակեց կասեցված նիստի աշխատանքները «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Տրդատ 2» խորհրդակցությունների սրահում :

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էին նաև քարտուղար Լ. Սահակյանը, «Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչներ Մ.Մուրադյանը և Վ. Մարտինյանը, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ «ՋԻ Սոլուշնս» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Ավետիսյանը, նախագծի ղեկավար Ռ.Սպատառուն և խորհրդական Ս. Պատուրյանը:

Ընդունվեց ի գիտություն, որ 2-րդ փուլին հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների հետ 12.08.2025թ. ժամը 18:00 հեռավար եղանակով կայացած միաժամանակյա քննարկումների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն.

- դեմո ցուցադրություններն իրականացվել են հեռավար եղանակով,

- յուրաքանչյուր մասնակցին տրամադրվել է 1 օր՝ առավելագույնը 8 ժամ տևողությամբ ցուցադրման հնարավորություն,

- ցուցադրման օրվա, ժամի և սցենարի վերաբերյալ մասնակիցները ծանուցվել են 14 օր առաջ,

-ի սկզբանե նախատեսվել էր ցուցադրություններն իրականացնել 2025թ. սեպտեմբերի 24-ին, 25-ին և 26-ին, մեկնարկը ժամը 10-ին, համապատասխանաբար Oracle և Dota IT, Amazon Web Services և Leverx և EUROPEAN DYNAMICS SA և VXSOFT LLC ընկերությունների կողմից: Սակայն 24.10.2025թ.ին ժամը 9:34-ին Dota It ընկերության կողմից ստացվել է հաղորդագրություն վերջինիս սերվերային համակարգի խափանման վերաբերյալ և առաջարկվել է հնարավորության դեպքում հետաձգել ցուցադրության օրերը առնվազն 2 շաբաթով: Առաջարկը քննարկվել է մյուս մասնակիցների հետ և ձեռք է բերվել համաձայնություն ցուցադրությունները տեղափոխել 2025թ. հոկտեմբերի 8-ին, 9-ին և 10-ին՝ նույն հերթականությամբ, ինչը և իրականացվել է:

«Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին իրենց դիտարկումները մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերով սահմանված պահանջների համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովը որոշեց.

- կասեցնել նիստը «Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչների կողմից լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու նպատակով,

-նիստը վերսկսել 28/10/2025թ ժամը 18:00-ին՝ ՀՀ ՖՆ վարչական շենքում թիվ 1 դահլիճում:

28/10/2025թ. ժամը 18:00-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին չէին մասնակցում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Դ. Գրիգորյանը և «Էլեկտրոնային կառավարման, ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի տնօրենի տեղեկատվական տոխնոլոգիաների գծով տեղակալ Տ. Առուշանյանը, շարունակեց կասեցված նիստի աշխատանքները ՀՀ ՖՆ վարչական շենքում թիվ 1 դահլիճում:

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էին նաև քարտուղար Լ. Սահակյանը, «Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչներ Մ.Մուրադյանը և Վ. Մարտինյանը, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ «ՋԻ Սոլուշնս» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Ավետիսյանը, թվային նախագծերի կառավարման դեպարտամենտի նախագծի ղեկավար Ռ.Սպատառուն և խորհրդական Ս. Պատուրյանը:

«Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին իրենց դիտարկումները և գնահատականները դեմո ցուցադրությունների՝ մասնակիցների հայտերով ներկայացված տեխնիկական առաջադրանքներին համապատասխանության վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի անդամները քննարկեցին և ներկայացրեցին իրենց դիտարկումները և գնահատականները մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերով սահմանված պահանջների համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովը որոշեց.

- կասեցնել նիստը գնահատման արդյունքներն ամփոփելու նպատակով,

-նիստը վերսկսել 06/11/2025թ ժամը 11:30-ին՝ հեռավար եղանակով:

06/11/2025թ. ժամը 11:30-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին չէր մասնակցում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ք. Ղալեչյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա.Քոչարյանը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Դ. Գրիգորյանը և «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն Ն. Երիցյանը, շարունակեց կասեցված նիստի աշխատանքները հեռավար եղանակով:

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էին նաև քարտուղար Լ. Սահակյանը, «Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ներկայացուցիչ Վ. Մարտինյանը, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ «ՔԻ Սոլուշնս» ՊՈԱԿ-ի թվային նախագծերի կառավարման դեպարտամենտի նախագծի ղեկավար Ռ.Սպատառուն և նույն ՊՈԱԿ-ի խորհրդական Ս. Պատուրյանը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ.Սահակյանը ներկայացրեց Amazon Web Services և Leverx, EUROPEAN DYNAMICS SA և VXSOFT LLC կողմից ներկայացված տեխնիկական առաջարկների /ոչ ֆինանսական բաղադրիչի/ ամփոփ գնահատականը համաձայն ներքոնշյալ աղյուսակի՝

№	Տեխնիկական առաջարկի գնահատման չափանիշներ	Հրավերով սահմանված առավելագույն միավոր	Մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները		
			Oracle և Dota IT	Amazon Web Services և Leverx	EUROPEAN DYNAMICS SA և VXSOFT LLC
1	Տեխնիկական առաջարկ /հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ TP = IP * 0.1 + MA * 0.25 + FR * 0.25 + SE * 0.3 + 0.1 * OW/	100	48.9	69.1	75.4
1.1	IP – Իրականացում և պլանավորում	100	24.2	87,6	92,1
1.2	MA – Տեխնիկական սպասարկում	100	45,39	88,44	95,72
1.3	FR – Ֆունկցիոնալ պահանջների լուծման մեթոդներ	100	100	89.1	79.3

1.4	SE – Նմանատիպ փորձի ներկայացում կամ COTS	100	33.9	53.2	74.9
1.5	OW- համակարգի սեփականություն (համակարգի սեփականությունը փոխանցվում է ՖՆ-ին, այո- 100 միավոր, ոչ- 0 միավոր	Կամ 100, կամ 0	0	0	0

Հանձնաժողովը որոշեց.

-հաստատել գնահատման արդյունքները.

- գնային առաջարկների բացման նիստը հրավիրել ս.թ. նոյեմբերի 11-ին ժամը 14:30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք.Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 11, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Ավանեսյան

Հանձնաժողովի անդամներ՝

_____ Գ. Մանթաշյան

_____ Ք. Ղալեչյան

KOCHARYAN ALFRED 3002890618 Подписано цифровой подписью: KOCHARYAN ALFRED 3002890618 DN: c=AM, st=--------, givenName=-------, serialNumber=6449f216f020, cn=KOCHARYAN ALFRED 3002890618 Дата: 2025.11.07 17:16:44 +04'00'

_____ Ա. Քոչարյան

DZHUMAYAN ARTAK 2801841080 Подписано: DZHUMAYAN ARTAK 2801841080 DN: cn=DZHUMAYAN ARTAK 2801841080, c=AM Дата: 2025.11.07 18:16:27 +04'00'

_____ Ա. Ջումայան

_____ Դ. Գրիգորյան

2025-11-07 16:28:38 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

_____ Ի. Գրիգորյան

Ստորագրող
ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2102800415

2025-11-07 18:26:11 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

_____Ն. Երիցյան

_____ Տ. Առուշանյան

_____ Ս. Շահնազարյան

_____ Վ. Մահտեսյան

Քարտուղար՝

SAHAKYAN LUSINE 7402760502 Digitally signed by SAHAKYAN LUSINE 7402760502 Date: 2025.11.07 14:22:09 +04'00'

_____ Լ.Սահակյան

Խորհրդատուներ՝

_____ Մ.Մուրադյան

_____Վ. Մարտինյան